-Կառավարությունը ներկայացնում է Հայաստանում տնտեսական աճի ցուցանիշներ: Հնարավո՞ր է գլոբալ ճգնաժամը լոկալ հարթահարել, և կարտահայտվի՞ դա կենսամակարդակի վրա:

-Գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման բոլոր պնդումները ժամանակավրեպ են և կարող են հանգեցնել նոր մարտահրավերների ձևավորմանը: Միայն ազդակը հաղորդվում է տնտեսությանն ու մարդկանց, որոշում նրանց վարքագիծը և կարող է այլ ուղղություններով խորացնել ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ յուրաքանչյուր երկրում իր առանձնահատկությամբ: Պնդել, թե ճգնաժամը հաղթահարված է, և արդեն ունենք առաջընթաց՝ նշանակում է չպատկերացնել տնտեսական իրական գործընթացները: Կառավարությունը և իր տնտեսական թիմն անընդհատ կանխատեսումներ են անում, իսկ երբ դրանք չեն իրականանում, պատճառաբանում են, որ միջազգային ֆինանսական կազմակերպություններն էլ հարկադրված վերանայում են իրենց կանխատեսումները: Սա ոչ միայն համարժեք հանձնառություն չէ, այլև վկայում է, որ ՀՀ կառավարությունն իր վարքագիծն ամբողջությամբ կապում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Իսկ այդ կազմակերպություններն ունեն իրենց առանձին շահերը, հատկապես փոքր տնտեսությամբ երկրների պարագայում: Համաշխարհային բանկի կամ Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները մեխանիկորեն կիրառելը հանգեցնում է մի իրավիճակի, երբ նույն կանխատեսումների ու խորհրդատվության շրջանակներում իրականացված քայլերով ձևավորվում է օլիգարխիկ ֆինանսական համակարգ: Ակնհայտ է, որ ՀԲ-ն կամ ԱՄՀ-ն այդպիսի համակարգ չէին ուզում տեսնել՝ առնվազն իրենց հայտարարությունների համաձայն: Երբ ձևավորվում է օլիգարխիկ համակարգ, երբ կապիտալն է ամեն ինչ թելադրում, բայց նույնիսկ չենք մոտեցել կապիտալիստական հասարակարգի ամենատարրական կանոններին, նշանակում է, որ մեխանիկական փոխադրումները տանում են դեպի կործանում՝ ինչի ականատեսն ենք մենք: Ես շատ վրդովված եմ, որ կառավարության նախկին ու ներկա իշխանամետ տնտեսագետները փորձում են հիմնավորել, թե ինչ լավ բարեփոխումներ են իրականացրել ու իրականացնում, որ ձևավորվել է կապիտալիստների կամ ունևորների խավ: Իրականում այդ խավը ոչ միայն չի տիրապետում կապիտալի տեղաբաշխմանը, այլև կորցրել է մարդկային դեմքը և սոցիալական պատասխանատվություն չի զգում իր վարքագծի համար: Բարեփոխումներ անվանվող ծեռնարկումներն իրականում չեն ձևավորել մարդուն ծառայող տնտեսություն: Խոսել ազգային տնտեսության մասին, ակնկալել, որ բնակչությունը տնտեսական աճից օգուտ պիտի ստանա, թեկուզ որոշակի ժամանակ անց, միամիտների համար է ասված:

-Իսկ ո՞վ միամիտներն ի՞նչ անեն:

-Առաջին հերթին հեղափոխություն է պետք մարդկանց գիտակցության մեջ: Օլիգարխիկ այս պայմաններում, ստվերայնության այսպիսի բարձր մակարդակում և անհասանելիության այս աստիճանին, երբ բնակչության 80 տոկոսի համար պարզապես տնտեսական նախածեռնությունները սահմանափակված են, հնարավորություններ չկան ծեռնարկատիրության իրականացման, աշխատանքի դիմաց պատշաճ աշխատավարձ ստանալու, որակյալ ծառայություններ ստանալու համար անհրաժեշտ են կտրուկ քայլեր: Եթե կառավարությունը դա չի անում, ստիպված է անել հանրությունը:

-Ի՞նչ անի հանրությունը՝ հեղափոխությո՞ւն:

-Այո, այդ հեղափոխությունը կարող է սոցիալական լինել, տնտեսական, քաղաքական՝ կարևորն անունը չէ: Եթե քաղաքացիները սիրում են իրենց երկիրը, իրենք իրենց և իրենց զավակներին, պիտի գնան այդ քայլին, որն ուշացնել արդեն հնարավոր չէ: Այդ քայլի առաջին գործողությունը սեփական իրավունքներին տեր լինելն է, իսկ մերժում ստանալու դեպքում՝ համախմբվելը:

-Միջազգային կազմակերպությունների հաշվին ապրող պետությունն ի՞նչ կարող է անել միջազգային կազմակերպությունների պատասխանատվության դեմ: Միջազգային կազմակերպություններն իրենց քաղաքականության համար պատասխանատվություն չե՞ն կրում:

-Իսկ մեր պետական մարմինները, որ սահմանադրությամբ նախատեսված լիազորություններ ունեն, պատասխանատվություն կրո՞ւմ են իրենց խոստումների չկատարման, իրենց հայտարարած քաղաքականության ձախողման համար: Ակնհայտորեն՝ ոչ: Հիմնական պատճառը ոչ միայն Սահմանադրության մեջ նման նորմի բացակայությունն է, այլև օրենքներով քաղաքական պատասխանատվության սահմանումը միայն. նախարարությունները, Կենտրոնական բանկը, պետական գերատեսչություններն իրենց արածների ու չարածների համար կրում են ընդամենը քաղաքական պատասխանատվություն, որը նշանակում է Ազ մեծամասնության դիրքորոշում: Իսկ Ազ մեծամասնությունը կոալիցիայի տեսքով պաշտպանում է նույնիսկ ամենապարտավոր նախածեռնությունը. ամենապատասխանատու վերաբերմունքը, որի համար ոչ միայն պետական ծառայողը պատասխանատվության չի ենթարկվում, այլև ամբողջ համակարգն է այլասերվում, և ձևավորվում է կոլեկտիվ անպատասխանատվության մթնոլորտ: Կենտրոնական բանկն ամեն տարի հայտարարում է գնաճի որոշակի տոկոս, գրեթե երբևէ չի հաջողվել այդ թիրախը պահել, ի վերջո, եթե ոչ հրաժարականի մեխանիզմի կիրառումը, նվազագույնը պե՞տք է հանրությանը բացատրվի, թե առաջադրված և քաղաքական մեծամասնության աջակցությանն արժանացած պատասխանատու անձը կամ անձինք ինչով են հիմնավորում իրենց կանխատեսումների չիրականացումը, քաղաքացիների իրական եկամուտի նվազումը... Եթե պետությունն իր արածի համար պատասխանատու չէ, ինչպե՞ս կարող է պատասխանատվության կոչել միջազգային կազմակերպություններին, որոնց ֆինանսներով է ապրում ու իր քաղաքականությունը կառուցում:

-Ո՞րն է ելքը այդ դեպքում:

-Միակ ելքը եղել է, կա և մնում է համախմբվածությունը և սեփական իրավունքների համար պայքարը:

-Չե՞ք ընդունում, որ քաղաքացիների մի ստվար զանգված այս պայմաններում իր գլուխը պահելու հնարը գտել է և անտարբեր է թե՛ իշխանության, թե՛ իշխանավորների նկատմամբ, ևս մի ստվար զանգված հեռացել է երկրից, իսկ մնացածներն ուղղակի պայքարունակ չեն, համարում են անիմաստ, անօգուտ կամ ամեն ինչ էլ իրենց սրտով է: Ի՞նչը պիտի պայքարի ոգի արթնացնի:

-Այսօրվա իրավիճակի համար մեղավոր ենք բոլորս և, առաջին հերթին, քաղաքական ուժերը, որոնք պետք է առաջնորդողը լինեին այն երկրի կառուցման գործում, որի մասին երազում է յուրաքանչյուր հայ: Կոալիցիոն հուշագրում ամրագրված էր՝ ստեղծել և ապահովել բարոյահոգեբանական միջավայրի բարելավում, հանդուրժողականություն: Որո՞նք են այն ցուցանիշները, որոնք կարող են վկայել՝ քաղաքական ուժերը հասել են այդ նպատակին կամ գոնե ճանապարհին են: Իշխանությունը պնդում է, որ իրականացնում է այդ ծրագրերը, բայց ելքային արդյունքները տեսանելի պետք է լինեն: Եթե բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումն ինքնասպանությունների, հոգեկան խանգարումների, հասարակության ագրեսիվության աճն է, անհանդուրժող վերաբերմունքը հայրենակիցդ նկատմամբ, հաջողությունը ծեռք է բերված: Իսկ եթե ոչ, ուղիղ հակառակն է, մեր քաղաքացիների մի ստվար զանգված, որը հետաքրքրված է իր կյանքով, այս ցուցիչներով պիտի ճիշտ կողմնորոշվի, ոչ թե հերթական ընտրություններում պատասխանատվությունը քաղաքական ուժերի վրա գցելով՝ գումարներ վերցնի ու գնա «ընտրության»: Որքա՞ն մարդ է հույսը կապում իր երկրի հետ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել երիտասարդներին: Եթե նրանց հարցումները վկայում են, որ մեծ մասը հույս չի կապում իր երկրի հետ և դրսում է ապագան տեսնում, նշանակում է ոչ միայն իշխանություններին, բոլորիս չի հաջողվել ծևավորել այն հույսը, վստահությունը, հավատը, որ նրանք կարող են կապել վաղվա Հայաստանի հետ:

-Ձեր կարծիքով՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի այցը Հայաստան արտաքին քաղաքականության մեջ որևէ փոփոխություն կարո՞ղ է բերել:

-Ինչպես ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնն էր ասել՝ այս տարածաշրջանն իրենք չեն դիտում որպես առանձին երկրներ, այլ մի ամբողջություն, միասնական շուկա: Շուկայական մոտեցումն էլ թելադրում է նրանց վարքագիծը՝ ո-

«Ի րատես de facto»-ի հարցերին պատասխանում է Ազ ՀՅԴ խմբակցության անդամ ԱՐՇՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԸ

«Ջիջելիք ունի Ադրբեջանը, և դա Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականությունն է, որը մենք դեռևս չենք կարողացել պետական մակարդակով հիմնական ուղղություն դարձնել»

րոնել անվտանգություն, որը կերաշխավորի տնտեսական նախածեռնությունների հաջողությունը: Հայ-թուրքական հարաբերությունների ձախողված նախածեռնողականությունը հանգեցրեց արագացման Լեռնային Ղարաբաղի հարցում՝ պատրաստելով լուծում, որը ծեռնտու չէ: Որ կորուստ և հետընթաց ենք արձանագրելու, միանշանակ է. նույն մադրիդյան նորացված սկզբունքները վկայում են, որ նախածեռնողական քաղաքականության հետևանքները դառն են մեզ համար, և այս իրավիճակից մեկ ելք կա՝ համախմբվել ազգային նպատակների շուրջը, իջնել փառամոլության աթոռից և համազգային համախմբվածությամբ ելքեր փնտրելու առաջարկ անել ողջ ժողովրդին: Արագընթաց լուծման բացասական հետևանքը կանխելու միակ ելքն ազգային միասնականության ապահովումն է: Այդ միասնականությունը կարող է ապահովվել իշխանության նախածեռնողականությամբ՝ ողջ հայության շրջանակներում:

-Համախմբում հանուն ինչի՞:

-Համախմբում՝ նախ ներքաղաքական լարվածության թուլացման, ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու, սոցիալ-տնտեսական կյանքում մենաշնորհը վերացնելու, մրցակցային կարգեր հաստատելու և սոցիալական արդարության հաստատման համար: Պետք է ապահովել համայն հայության ներուժի գործադրումը Լեռնային Ղարաբաղի, ներառյալ ազատագրված տարածքների, վերաբնակեցման համար: Եթե այս ամենը չարվի, մեզ պարտադրվելու է տարածքների կորուստ, որից հետո այլևս հայ ժողովուրդը կարող է ոտքի չկանգնել:

-Հնարավո՞ր եք համարում համախմբում, երբ որևէ պաշտոնյա նույնիսկ չի ասում՝ Հայաստանն ընդունե՞լ է մադրիդյան սկզբունքները, թե ոչ, թե պետք միջազգային կառույցների որոշումներն ու բանաձևները. Մենք անդամ երկրների նախագահների համատեղ հայտարարությունը վկայում ենք, որ եթե արդեն խոսվում է խաղաղության համաձայնագրի մշակման մասին, ուրեմն համաձայնություն կայացվել է: Ադրբեջանը միջազգային կառույցներում հասել է այն արդյունքին, որ տարածքները ընկալվում են ոչ թե իր պաշտպանության համար մղված մարտերում իր իսկ տարածքներն ազատագրած երկրի ծեռքբերում, այլ ագրեսիա, որը պետք է պատժվի:

-Աշխարհն այդպես է ընկալում, երբ տեսնում է, որ քո իշխանությունը պատրաստ է զիջման, ուստի ազատ է հավատալու ադրբեջանաթուրքական լոբբինգին, որը ստեղծում է ագրեսիվ ու ագրեսոր Հայաստանի կերպար: Իրականությունը հասու չի դառնում միջազգային կառույցներին, արտաքին գործերի նախարարության վարած քաղաքականությամբ մեր դիրքերն օրեցօր ավելի են թուլանում: Կրկնում եմ՝ փառամոլության ապտից պետք է իջնել և անկեղծորեն խոստովանել սեփական սխալները ժողովրդի առաջ: Ավելի լավ է սխալները խոստովանել և ելքեր որոնել, քան սխալը չընդունելով առաջ գնալ և ժողովրդին կանգնեցնել փաստի առջև: Իրավիճակն իշխանություններից ողբալ-տխրություն է պահանջում, դեռ հնարավոր է կանխել հետագա կորուստները:

-Չե՞ք կարծում, որ արդեն ուշ է: Նույնիսկ Չայլուի դեպքերից հետո արտաքին աշխարհը երկու կողմերին էր զենքի չդիմելու կոչեր անում...

-Ես կարծում եմ, որ Չայլուի դեպքերին պետք էր ասիմետրիկ պատասխան՝ մի քանի տեղում համարժեք հարվածներ: Դա կստիպեր Ադրբեջանին հասկանալ, որ անհնար է անպատիժ խախտել արյան գնով ծեռք բերված զինադադարը, մինչդեռ ռազմականը թողած՝ մենք փորձեցինք պատասխանել դիվանագիտական հարթության մեջ, և արդյունքում ՀՀ նախագահը ստիպված էր ևս մեկ անգամ հիշեցնել, որ կոնֆլիկտի կողմերը ԼՂՀ-ն և Ադրբեջանն են... Այդպիսի դեպքերին իրականպես պետք է ասիմետրիկ պատասխան տրվի, որ դիմացինդ քո ուժը տեսնի: Յուրաքանչյուր ժողովուրդ, եթե ուզում է գոյատևել, պետք է ծգտի խաղաղության, սակայն խաղաղությունը, եթե բոլոր միջոցները սպառված են, ծեռք է բերվում նաև պատերազմով կամ առնվազն պատերազմին պատրաստ լինելով: Մեր երկրում այդ ընկալումը հետին պլան է մղված, երկրի ներսում շատ լուրջ դերակատարություն է ստանձնել օլիգարխիկ կապիտալը, որի տերերը պատրաստ են ամեն գիջման, միայն իրենց կապիտալը չվնասվի, բոլորովին չի գիտակցվում, որ ամեն մի գիջում բերելու է թե կապիտալի կորստի, թե ժողովրդի արտագաղթի:

-Այսինքն՝ ընթացիկ ու կենսական շահի գիտակցություն չի՞ ձևավորվել:

-Այդ գիտակցությունը չի եղել, չկա և չի լինի, քանի դեռ թիվ 1 պատասխանատուները սեփական սխալները չեն խոստովանում և չեն ուզում շտկել: Դա ոչ միայն նրանց է պետք, այլև հնարավոր է հետագայում այդ սխալները չկրկնելու, միևնույն թաքցնելը, արդարացումների որոնումը բերում են նոր սխալներ: Ցավոք, մեր իրականության մեջ դա ընդունված չէ, բայց ուզում եմ հավատալ, որ հայի վերջին խելքը այս դեպքում գոնե կաշխատի:

-Պատերազմը հավանական՞ է այս իրավիճակում:

-Ես միշտ եմ պատերազմը հավանական համարել, այս իրավիճակում ևս: Ամեն ինչ պետք է անել ստատուս քվոն պահպանելու և երկարաժամկետ խաղաղություն ապահովելու համար, սակայն եթե ելքը պատերազմն է, մնում է պատերազմել: Այդպես կլինի, եթե շարունակենք վախվորած, զիջման քաղաքականությունը, դիմացինդ շատ ավելի զգաստ ու զգոն կլինի, եթե գիտակցի քո ուժը: Ադրբեջանն այսօր շատ ավելի է վախենում պատերազմից, որովհետև ունի այլ երկրների հետ կապված տնտեսական շահեր՝ նավթամուղներին ու գազամուղներին ուղղված ամեն մի վտանգ բազմամիլիոնանոց կորուստներ է բերելու, որ Ադրբեջանին չեն ների օտարերկրյա կապիտալի տերերը: Թեև մեր հակառակորդն ավելի շատ է վախենում պատերազմից, ստեղծում է այն տպավորությունը, թե վախեցողը մենք ենք, և այդ վախը հանգեցնում է անընդհատ զիջելու մեր հակումին: Զիջելիք ունի Ադրբեջանը, և դա Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականությունն է, որ մենք դեռևս չենք կարողացել պետական մակարդակով հիմնական ուղղություն դարձնել: Մա է, որ անկախ, ժողովրդավարական ԼՂՀ-ի ստեղծման գրավականն է, որտեղ հաշտ ու համերաշխ կարող են ապրել բոլոր ազգությունները: Փախստականների վերադարձ չի կարող լինել, քանի դեռ ճանաչված չէ ԼՂՀ-ի անկախությունը, քանի դեռ ԼՂՀ-ում ծևավորված չէ այնպիսի օրենսդրական դաշտ, որը երաշխավորի բոլոր ազգերի հավասար ապրելու հնարավորությունը: Եթե ուզում եք Հարավային Կովկասում ժողովրդավարության կղզյակ ունենալ, ճանաչեք ԼՂՀ-ի անկախությունը:

-Ֆուտբոլի աշխարհի չեմպիոն ո՞վ է դառնալու:

-Շատ կցանկանայի, որ հարավամերիկյան որևէ թիմ լիներ, ցավոք, նրանք սլացիկ հեռանում են, միակ հույսս մնացել էր Ուրուգվայի հավաքականը, որ կարող էր երրորդ անգամ նվաճել աշխարհի գավաթը:

-Իսկ ռացիոնալ գերմանացինե՞րը:

-Գերմանական մեքենան միշտ իր գործն անում է, ես դավանում եմ ակտիվ ու գեղեցիկ ֆուտբոլ, որ հիմնականում խաղում են հարավամերիկյան թիմերը:

Զրույցը՝
Անահիտ ԱԴԱՍՅԱՆԻ